ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

«27» սեպտեմբերի 2022 թվականի N 1-Լ

ՔՏՀԱ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԵՂԱՄ ՇԱԽԲԱԶՅԱՆԻՆ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի՝ 2019 թվականի սեպտեմբերի 26-ի N 5-Լ որոշման հավելվածի 7-րդ կետի 4-րդ ենթակետը, Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2022 թվականի սեպտեմբերի 27-ի արտահերթ նիստի օրակարգում ընդգրկված հարցի վերաբերյալ քվեարկության արդյունքները՝ 7 կողմ, 5 դեմ, Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կառավարման խորհրդի կողմից ՀՀ վարչապետին ներկայացնել առաջարկություն տեսչական մարմնի

ղեկավար Գեղամ Շախբազյանին պաշտոնից ազատելու վերաբերյալ՝ հաշվի առնելով Գեղամ Շախբազյանի դիմումը:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

27.09.2022

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Подписано: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246

Ա. ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

2022 թվականի սեպտեմբերի 27
Երևան